<< Էդիտ Պրինտ>> հրատարակչություն

Ավարտական հետազոտական աշխատանք

Թեմա՝ Ազգային և ժաղովրդական արժեքների հիման վրա տարբեր իրավիճակներում սովորողների կողմնորոշվելը

Առարկա՝ Հայոց պատմություն

Ուսուցիչ՝ Նարինե Գևորգյան

Դպրոց՝ Ա.Իսահակյանի անվան թիվ 16ավագ դպրոց

Ղեկավար՝Արմեն Ղուկասյան

2023թ

Բովանդակություն

Ներածություն 3

Անձի արժեք 4

Արժեքային համակարգը 21-րդ դարում 6

Արժեքային համակարգի ձևավորման վրա ազդող գործոնները..... 7

Աշակերտների արժեքների ձևավորման խնդիրները 10

Եզրակացություն 11

Օգտագործված գրականություն 14

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ժամանակակից աշխարհում տեղի ունեցող իրադարձություններով պայմանավորված փոխվում են հասարակության զարգացման հիմքում ընկած կարևոր համակարգեր և ոլորտներ: Մարդկության ձարգացման նոր միտումները բերում են անձի արժեքային համակարգի, վերաբերմունքի, վարքագծի, աշխարհընկալման փոփոխությունների: Բոլորիս հայտնի է, որ այսօր սովորողների արժեքային համակարգի ձևավորումը ուղղակիորեն կապված է հասարակության մեջ տեղի ունեցող բազմաթիվ փոփոխություններով: Կայծակնային արագությոմբ զարգացող տեխնոլոգիաները, նորագույն ծրագրերը , կրթական համակարգում տեղի ունեցող բազմաթիվ փոփոխություններն ու նորարարությունները թելադրում են նորովի մոտեցում յուրաքանչյուր աշակերտի: Մանկավարժության մեջ արժեքային համակարգ հասկացությունը բավականին լայն հասկացություն է: Արժեհամակարգը մարդու բարոյական, գեղագիտական, հոգևոր, իմացական, մշակութային և էթնիկական արժեքների համախումբն է, որն անհրաժեշտ է անձի ներդաշնակ, բազմակողմանի և լիարժեք ձևավորման ու զարգացման համար: Մեր օրերում աճող սերնդի դաստիարակության գործն ընթանում է տարբեր հանգամանքների ազդեցության ներքո՝ կրթական, ժողովրդագրական, ազգային, ընտանեկան, մշակույթային, հասարակական, սոցիալական և այլն: Հաշվի առնելով բազմաթիվ այս և այլ հանգամանքներ՝ ժամանակակից մանկավարժության համար խնդիր է դառնում սովորողների ազգային գիտակցության ձևավորումը սեփական ժողովրդի պատմության ու մշակույթի հենքի վրա՝ չանտեսելով համամարդկային արժեքները: Այս հետազոտական աշխատանքը միտված է բացահայտելու և ներկայացնելու

աշակերտների մեջ ձևավորված արժեքները: Անհրաժեշտ է պարզ գիտակցել, որ դպրոցի նպատակը կիրթ, մարդասեր, հոգևոր արժեքներով հարուստ, ակտիվ, բարձր բարոյականության տեր, իր հայրենիքը սիրող մարդու դաստիարակությունն է:

ԱՆՁԻ ԱՐԺԵՔ

Անձնային արժեքների խնդիրը քննարկվել է տարբեր ոլորտների շրջանակներում և տրվել դրանց բազմաթիվ սահմանումներ: «Անձնային արժեք» հասկացությունը կիրառվում է տարբեր իմաստներով: Պատմության մեջ առանձնացնում են «արժեք»հասկացության ավելի քան հարյուր սահմանումներ, որոնցում առաջարկվում են տվյալ խնդրի ուսումնասիրման տարբեր մոտեցումներ և կողմեր:Անձնային արժեքը մարդու մասին գիտությունների՝ փիլիսոփայության, հոգեբանության, մանկավարժության, սոցիոլոգիայի և այլ գիտությունների կարևոր խնդիրներից մեկն է: Անձի արժեքային համակարգի ձեւավորման եւ շարժընթացի խնդիրը ընդունված է դիտարկել հոգեկան զարգացման ընդհանուր օրինաչափությունների համատեքստում: Այն անմիջականորեն կապված է տարիքային զարգացման առանձնահատկությունների հետ:Արժեքային համակարգի ձեւավորումն անհնար է պատկերացնել հասարակությունից, մարդկանց հետ շփումից զատ: Անձի արժեքների համակարգը ձեւավորվում է սոցիալականացման ընթացքում:Արժեքային համակարգի ձեւավորումն ընթանում է դաստիարակության եւ կրթության ընթացքում սոցիալական փորձի յուրացման միջոցով:Արժեհամակարգն իր մեջ ընդգրկում է անցյալի փորձը,որի յուրացումը աշակերտների մեջ ձևավորում է հայրենասիրության, սեփական ժողովրդի պատմության, նրա ստեղծած մշակութային արժեքների, գիտական նվաճումների

համար հպարտության զգացում: Իսկ ակտիվ ճանաչողական գործունեության պայմաններում ձևավորված գիտելիքները աշակերտների մոտ վերածվում են համոզմունքների և կարողությունների:

ԱՐԺԵՔԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ 21-ՐԴ ԴԱՐՈՒՄ

Հայ դպրոցը շատ անելիքներ ունի նոր սերնդի արժեհամակարգի ձևավորման, կրթության և դաստիարակության գործում, որի նպատակն է կերտել բարոյական, ազգային արժեքներով օժտված, ազգային նկարագիր ունեցող սերունդ: Ժամանակակից դպրոցի կարևորագույն առաքելություններից մեկն էլ երեխայի մեջ իր ազգին բնորոշ բարոյական և հոգևոր արժեքների ձևավորումն ու զարգացումն է: Նրա խնդիրն է պահպանել և փոխանցել այն արժեքները, որոնք ժառանգել ենք մեր նախնիներից, և որը մեր անխառն ինքնատիպությունն է համաշխարհային մշակույթի բազմերանգության ու բազմազանության մեջ:Ուստի 21-րդ դարի դպրոցում դաստիարակության և կրթական գործընթացի ճիշտ կազմակերպման համար շատ կարևոր են ոչ միայն համամարդկային, այլև հայրենի մշակույթի բարձրարժեք ստեղծագործությունների ուսումնասիրումն ու ուսուցումը: 21-րդ դարի դպրոցում դաստիարակության և կրթական գործընթացի ճիշտ կազմակերպման համար շատ կարևոր են ոչ միայն համամարդկային, այլև հայրենի մշակույթի բարձրարժեք ստեղծագործությունների ուսումնասիրումն ու ուսուցումը: Հայ ժողովրդի ավանդույթներում վառ կերպով արտացոլված են մեր ազգի ազգային հավաքական բնույթը, անդրդվելի կամքը, ներքին զորությունն ու հնարավորությունները, ապրելու,

վերածնվելու և հարատևելու ունակությունը: Այս ամենն է, որ անհրաժեշտ է ավանդել ժամանակակից էթնոկրին:

ԱՐԺԵՔԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵԱՎՈՐՄԱՆ ՎՐԱ ԱԶԴՈՂ ԳՈՐԾՈՆՆԵՐԸ

Աշակերտի արժեքների ձևավորման վրա կան բազմաթիվ ազդող գործոններ որոնցից մեկն է ավանդական միջոցը, այսինքն՝ աշակերտի մեջ աշխարհի նկատմամբ վերաբերմունքի և հասարակության հետ հարաբերության, սեփական անձինկատմամբ վերաբերմունքի ձևավորումը ընտանիքի և սոցիալական միջավայրի միջոցով: Սակայն սովորողների կողմից այդ միջավայրին բնորոշ արժեքների, կանոնների, չափանիշների, հայացքների յուրացումը միշտ չէ, որ համապատասխանում է հասարակության կողմից ընդունված արժեքներին և խրախուսելի չափանիշներին:Սովորողների անձի արժեքների ձեւավորման առումով հանրակրթության մեջ ուրույն նշանակություն ունեն ուսուցանվող օտար լեզուները, մասնավորապես՝ ռուսաց լեզուն, որով ստեղծված համաշխարհային նշանակության պատմական կոթողներն ունեն սերունդ կրթելու եւ մարդկային հատկանիշներով նրանց դաստիարակելու հսկայական ներուժ: Ահա թե ինչու հանրակրթական դպրոցում հայոց պատմություն և համաշխարհային պատմության դասավանդումը դուրս է գալիս սոսկ օտար մշակույթ ուսուցանելու նեղ շրջանակից եւ վերածվում է սովորողների գեղագիտական, բարոյական, հոգևոր արժեհամակարգը ձեւավորելու մի միջոցի, որի դերը չպետք է թերագնահատել: Այլ լեզվի բազմաթիվ հարստությունները տալով սովորողներին անուղղակիորեն նրանց դաստիարակում ենք այլոց հոգեւոր արժեքները ճանաչելու եւ գնահատելու բարոյական պատրաստակամությամբ, իսկ այլ

գրականության մարգարիտները հարստացնում են սովորողների հոգեւոր պաշարները եւ հղկում գեղագիտական ճաշակը, ինչը էական նշանակություն ունի նրանց արժեհամակարգի լիարժեքության համար։

Իբրեւ պատմության ուսուցչուհի՝ սեփական փորձով կարող եմ փաստել, որ աշակերտի արժեհամակարգը պետք է ձեւավորել ներդաշնակության սկզբունքով,որում իր ուրույն տեղը պետք է ունենա հնարավորինս սերտ հաղորդակցումը օտար մշակույթին եւ լեզվին։Արժեքների բուրգի գագաթին գտնվող նվիրական ու մեծագույն արժեքի՝ հայրենասիրության զգացումը դաստիարակելու համար հայ գրականության դասընթացը բազմաթիվ հիանալի հնարավորություններ է ընձեռում: Կարելի է,դիցուք, հիշատակել Լեւ Տոլստոյի «Պատերազմ եւ խաղաղություն»,<<Դավիթ Բեկը>>….էպոպեայի ուսուցումը, որն իրականացվում է այն գերագույն նպատակադրումով, որ նրանով կարելի է ոչ միայն հայ, այլեւ ցանկացած այլազգի դպրոցականի հոգում վառել հայրենասիրության կրակը՝ վեպի հերոսների, նրանց գործողությունների,անձնազոհության ու հայրենանվիրության բացահայտումներով: Հայրենասիրությունն այն մեծագույն արժեքն է, որ հարգանք ու պատկառանք է հարուցում, նույնիսկ երբ դրսեւորվում է հակառակորդի կամ թշնամու մոտ: Յուրաքանչյուր ուսուցիչ ունի որոշակի հեղինակ կամ ստեղծագործություն, որը նրան ամենադյուրին կերպով է օգնում իր մանկավարժական խնդիրները լուծելու, տվյալ դեպքում՝ հայրենասիրության բարձրագույն արժեքը սաների հոգիներում սերմանելու համար:Մեզ համար դա տարիներ ի վեր եղել եւ մնում է համաշխահարհային պատմության այդ հսկայի՝ Լ. Տոլստոյի վերոնշյալ ստեղծագործությունը: Ուսուցչի քաղաքացիական դիրքորոշումը, ձգտումը՝ դաստիարակել բարձր արժեքներ կրող քաղաքացիներ, նրա մտահորիզոնը, հասարակական լայնախոհությունը, սերը երեխաների նկատմամբ ուսումնական գործընթացի արժեքային դաստիարակչական ներգործության բարձրացման կարեւոր

պայմաններից են: Ընդ որում՝ դաստիարակչական խնդիրների լուծումը պայմանավորված է նաեւ նրանով, որ ուսուցիչը համագործակցային փոխհարաբերությունների միջոցով նախատեսում է աշակերտների ոչ միայն մտավոր, այլեւ բարոյական, գեղագիտական ու ֆիզիկական դաստիարակության խնդիրների նկատմամբ համակողմանի մոտեցում:

Աշակերտի արժեքների ձևավորման վրա մյուս ազդող գործոնը տարիքայինն է, երբ սովորողի արժեքային կողմնորոշումները, արժեքային նախապատվությունները, վարքն ու բարոյահոգեբանական գծերը արտահայտվում են՝ ըստ տարիքային առանձնահատկությունների: Աշակերտի արժեքների ձևավորման վրա մյուս ազդող գործոնը տարիքայինն է, երբ սովորողի արժեքային կողմնորոշումները, արժեքային նախապատվությունները, վարքն ու բարոյահոգեբանական գծերը արտահայտվում են՝ ըստ տարիքային առանձնահատկությունների:Արտաքուստ արժեհամակարգային դաստիարակությունը դրսևորվում է աշակերտի վարքի ու շփման հարաբերությունների որոշակի մակարդակում՝ խոսքում, արտաքին տեսքում, ազատ ժամանակն անցկացնելու ձևում, ապրելակերպում և այլն: Տարիքային դաստիարակությանը բնորոշ են հակումը դեպի մշակույթի որոշակի շերտերը, կենցաղին բնորոշ արժեքների որոշակի աստիճանակարգությունը: Սակայն այստեղ ամենակարևոր գործոնը մանկավարժների կողմից աշակերտների մեջ ձևավորել կյանքի նկատմամբ դրական վերաբերմունք, ապրած յուրաքանչյուր օրվա համար ուրախության զգացում և ապրելու ունակության ձևավորումն է: Սովորողի անձի արժեքների ձևավորման վրա ազդող մյուս գործոնը միջանձնային արաբերություններն են կամ հեղինակավոր անձինք: Հեղինակավոր անձինք կարող են լինել նաև աշակերտի վրա ներգործող հասարակական այս կամ այն կազմակերպությունների անդամները, դպրոցի տնօրենը, դասղեկը, ուսուցիչը և այլն: Աշակերտը նրանցից կարող է ստանալ արժեքների վերաբերյալ ինչպես դրական օրինակներ, այդպես նաև

բացասական:Բացասական մոդելները հակում ունեն ձևավորվելու ավելի արագ և անդառնալի բացասական ազդեցություն կարող են ունենալ սովորողի անձի արժեքային ճիշտ դաստիարակության վրա: Հետևաբար արժեքների դաստիարակության այս բնագավառը պահանջում է մանկավարժական խստագույն վերահսկողություն և ըստ հարկի՝ նաև միջամտություն:

ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ԱՐԺԵՔՆԵՐԻ ՁևԱՎՈՐՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Աշակերտի արժեքների ձևավորման խնդիրները լուծվում են ոչ միայն ընտանիքում, այլ նաև ուսումնական հաստատություններում՝ ուսումնադաստիարակչական գործընթացի միջոցով: Ուսումնադաստիարակչական ներգործությունը օբյեկտիվ օրինաչափություն է, որովհետև աշակերտների համար ուսուցումը գործունեության հիմնական տեսակն է, դրա համար էլ այն կարևոր դեր է կատարում նրանց անձի ձևավորման գործում: Ուսուցման գործընթացի դաստիարակչական ներգործության հարուստ աղբյուր է բուն գործընթացի բովանդակությունը, որովհետև ընտրելով դաստիարակչական առումով հիմնական գաղափարները, օրենքները և հասկացությունները՝ ուսուցիչը հնարավորություն է ստանում առարկայական ծրագրերի բովանդակության յուրացման միջոցով աշակերտների մեջ սերմանել քաղաքական, իրավական, բարոյական, գեղագիտական, բնապահպանական և այլ գիտելիքներ ու վերաբերմունք: Կրթության բովանդակության հետ միասին ուսուցման մեթոդները ներգործում են աշակերտների ճանաչողական ունակությունների վրա՝ նրանց հնարավորություն տալով ստացած գիտելիքները կյանքում օգտագործելու ըստ նպատակի:

Ուսուցման գործընթացում լուծվում են սովորողների կրթական, դաստիարակչական կամ արժեքային և ընդհանուր զարգացման խնդիրները: Դրա համար յուրաքանչյուր դասի դաստիարակչական խնդիրների լուծումը նախատեսում է ոչ թե մեկուսացված կամ առանձին մոտեցում, այլ գիտելիքների ու կարողությունների, արժեքային որակների, կամքի, բնավորության, զգացմունքների, հոգեբանական տարբեր դրսևորումների միաժամանակյա և փոխկապակցված մոտեցում:Յուրաքանչյուր դասի ժամանակ ուսուցիչը որոշակի դաստիարակչական խնդիրներ է լուծում՝ հաշվի առնելով տվյալ առարկայի և թեմայի ուսումնասիրման հիմնական խնդիրները, որոնք

ներկայացված են առարկայական ծրագրերում:

Նա առանձնացնում է ընդհանուր դաստիարակչական խնդիրները, որոնք առանձին աշակերտների մոտ հաճախակի են դրսևորվում: ՈՒսուցման կազմակերպման տարբեր ձևերի ընտրության միջոցով ուսուցիչը (անհատական, խմբային,էքսկուրսիա, դասղեկական ժամ, արտադասարանական միջոցառումներ և այլն) առավել արդյունավետ է դարձնում աշակերտների արժեհամակարգային դաստիարակչական խնդիրների լուծումը: Օրինակ՝ խմբային աշխատանքի ժամանակ աշակերտները սովորում են ուշադրությամբ և հոգատարությամբ վերաբերվել միմյանց, միասին հաղթահարել դժվարությունները, միասին ձեռք բերել հաջողություններ, լսել հակադիր կարծիքներ, ընդօրինակել միմյանց և այլն: Հասակակիցների խմբում աշակերտն ավելի ազատ է արտահայտում իր մտքերն ու դատողությունները, գործում է անկաշկանդ, ինչն էլ նպաստում է ուսուցման արդյունավետ կազմակերպմանը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ելնելով վերոհիշյալից՝ կարող ենք եզրահանգել ,որ արժեքային համակարգի ձևավորումը ժամանակակից դպրոցի գերխնդիրն է և մշտապես պետք է լինի դպրոցի և մանկավարժների ուշադրության կենտրոնում։

Այս հետազոտական աշխատանքից ելնելով կարող ենք եզրահանգել այն մտքին, որ մատաղ սերնդի արժեհամակարգի ձևավորման վրա նաև շատ մեծ ազդեցություն ունի հայ ժողովրդի մշակույթը և ազգայինի գիտակցումը։Խոսքը գնում է ազգային արժեքային համակարգի ձեւավորման մասին: Արժեհամակարգի ձեւավորման եւ նրա հարաբերական կայունության ապահովման համար հանրակրթության բնագավառում նաև շատ կարեւոր եւ անփոխարինելի նշանակություն ունեն բոլոր ուսումնական առարկաները: Անշուշտ դպրոցում սովորողները պետք է լավ ծանոթ լինեն հազարամյակների կենսագրություն ունեցող հայկական քաղաքակրթությանը, նրա առաջացման ու զարգացման օրինաչափություններին,ձեռքբերումներին, ստեղծած արժեքներին եւ համամարդկային նվաճումներին, ինչպես նաեւ՝ այդ ճանապարհին հայ ժողովրդի դժվարություններին ու կորուստներին։ Այս ամենը պետք է օգտագործել ի նպաստ հայոց պետականություն և Հայաստանի լավ քաղաքացի, պատասխանատու, ազնիվ և պարկեշտ մարդ դաստյարակելու համար։ Այդ իսկ պատճառով արժեաքյին համակարգի ձեւավորումը ժամանակակից դպրոցի գերխնդիրն է եւ մշտապես պետք է լինի մանկավարժների ուշադրության կենտրոնում։

Յուրաքանչյուր աշակերտ պետք է իմանա,որ որպես հայ՝ ո՞րն է իր անելիքն այստեղ՝ հայրենիքում։ Հենց այս պատճառով է,որ կրթության հենքը եւ գլխավոր իմաստը պետք էդառնա արժեհամակարգի ձեւավորումը; Արժեհամակարգը պետք է ձեւավորվի ազգային հոգեւոր-բարոյական ընդհանրականության հիմքի վրա։

Կրթության հիմքը և գլխավոր իմաստը պետք է դառնա արժեհամակարգի ձևավորումը։

Դպրոցը պետք է լինի օրինակելի տարածք բոլորի համար ,որտեղ կան հաստատուն էթիկական նորմեր, որտեղ աշակերտները սովորում են լինել դրանց համապատասխան։ Դպրոցը պետք է պայքարի հանրության մեջ տարածված կարծրատիպրի և արատների դեմ, և այդ պայքարում պարտավոր է լինել միշտ հաղթող։

Դպրոցում կյանքը չի կարող հեշտ լինել երեխայի համար՝ նա պետք է զգա և՛ ցավ, և՛ուրախություն, ունենա թե դժվարություններ, թե հաղթանակներ։ Դպրոցում աշակերտը պետք է ընկալի համակեցության նորմերի իմաստը և ընդունի դրանք։ Այդ ամենի պտուղը պետք է լինեն իրական արժեքները, այլ ոչ թե թելադրված, անգիր արած, բայց աշակերտի համար ոչինչ չնշանակող ճշմարտությունները։

Սեփական փորձից կարող եմ եզրակացնել, որ գեղարվեստական գրականությունը լավագույն միջոցն է, որը կյանքի բոլոր փուլերի համար է և կյանքի յուրաքանչյուր շրջափուլում այն իր ազդեցությունն ու բարոյախոսությունն ունի։ Եթե էթիկական նորմերը ծառի արմատներն են, իսկ արժեքները՝ բույնը, ապա բարոյականությունը դրա սաղարթն է։

Բարոյական է այն ամենը, ինչը նպաստում է արժեքների պահպանմանն ու դրանց զարգացմանը եւ չի հակասում դրանց։ Եթե մենք կարողանանք կառուցել դպրոցներ, որոնք կձևավորեն հարուստ արժեհամակարգ ունեցող աճող սերունդ կունենանք աշխարհի ամենալավ և ամենահիմաստալից կրթական համակարգը և հասարակությունը։

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Առարկայական չափորոշիչներ, https://escs.am/am/search

2. Հանրակրթության պետական չափորոշիչ https://www.arlis.am/documentview

3. Հանրակրթական դպրոցի տնօրենի ուղեցույց, Կրթակարգ, ԿԱԻ, Երեւան, 2004թ.:

4. Իլյինսկի Ի., Ռուսաստանի կրթության «արդիականացումը» համաշխարհային գլոբալացման համատեքստում, «Կրթությունը XXI դարում» գիտակրթական հանդես, N1, էջ 50-83, Երեւան, 2014 թ.:

5. Մանասյան Ն., Հանրակրթությանարժեքային համակարգը, «Մանկավարժություն» գիտամեթոդական վերլուծական ամսագիր, 2004թ., N1/2, էջ 6-15:

6. Գարեգին Նժդեհ, «Հատընտիր», Երեւան, Ամարաս, 2006թ.:

7. Ա. Գեւորգյան, Ազգային կրթության դերն ու նշանակությունը սովորողների հայեցի դաստիարակության գործընթացում, Եր., 2002,:

8. Սուխոմլինսկի Վ. Ա., Սիրտս նվիրում եմ երեխաներին, Երեւան, 1977թ.:

9. Ղուկասյան Ա,Հայոց պատմությունը 8-9 րդ դասարաններում: Ուսուցչի ձեռնարկ:

10. Արմինե Սարգսյան,Արման Մալոյան , Հայոց պատմություն 10-11 րդ դասարաններում:

11. Բաբանսկի Յու.-Աշակերտների դաստիրակությունը կոմպլեքսային մոտեցում:

12. Մուդրիիկ Ա.Վ.-Դպրոցականի անձը եւ նրա դաստիրակությունը կոլեկտիվում

Երեւան1986

13. Педагогика, под. ред. Ю. К. Бабанского, С. Нойнера и др., М., 1978. 14. Я. Корчак, Избранные педагогические произведения, М., 1979